Հավելված N 8
ՀՀ առողջապահական և աշխատանքի
տեսչական մարմնի ղեկավարի
2020 թվականի փետրվարի 20-ի N 152 - Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին) որակի ապահովման վարչությունը (այսուհետև՝ Վարչություն) Տեսչական մարմնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից է:

2. Վարչության կանոնադրությունը հաստատում է Տեսչական մարմնի ղեկավարը:

3. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեսչական մարմինների մասին» օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, Տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշումներով և սույն կանոնադրությամբ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչության գործունեության հիմնական նպատակն է Տեսչական մարմնի գործունեության արդյունքի մեծացումը և շարունակական կատարելագործումը:

5. Վարչության գործունեության հիմնական խնդիրներն են՝

1) պարբերաբար բացահայտել Տեսչական մարմնի գործունեության արդյունքում առաջացած խնդիրները և գնահատել ռիսկերը,

2) աջակցել Տեսչական մարմնին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով հասնել իր նպատակների իրագործմանը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչության գործառույթներն ուղղված են սույն կանոնադրությամբ սահմանված նպատակի և խնդիրների իրագործմանը:

7. Վարչությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված Տեսչական մարմնի գործունեության նկատմամբ ներքին հսկողություն,

2) Տեսչական մարմնի աշխատակիցների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Տեսչական մարմնում ներքին կարգապահական կանոնների և էթիկայի կանոնների պահպանման նկատմամբ ուսումնասիրություններ և վերլուծության ներկայացնում Խորհուրդ,

3) Տեսչական մարմնի, նրա ծառայողների գործողությունների կամ անգործության կամ նրա կողմից ընդունված իրավական ակտերի վերաբերյալ ստացված բողոքների ուսումնասիրում, թերությունների վերհանում, դրանց հիման վրա կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում և ներկայացում Խորհուրդ,

4) Վարչության գործունեության տարեկան ծրագրի կազմում և ներկայացում Խորհուրդ,

5) Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատում,

6) Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում անվտանգության բարձրացմանը և ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունների ուսումնասիրում, թերությունների վերհանում և վերլուծության արդյունքների ներկայացում Խորհուրդ,

7) Վարչության գործունեության տարեկան ծրագրի համաձայն՝ հաշվետվությունների ներկայացում Խորհուրդ,

8) առաջարկությունների ներկայացում Տեսչական մարմնի ղեկավարին, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակին (ասյուհետ՝ Գրասենյակ) և Խորհրդին՝ Վարչության, ինչպես նաև Տեսչական մարմնի գործունեությունը բարելավելու, կատարելագործելու և արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ,

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Խորհուրդը, իսկ աշխատանքները համակարգում է Գրասենյակը:

9. Վարչությունը գործում է Վարչության պետի անմիջական ղեկավարությամբ:

10. Վարչության պետը կազմակերպական և անձնակազմի կառավարման հարցերում անմիջական հաշվետու է Տեսչական մարմնի ղեկավարին, իսկ գործառութային մասով հաշվետու է Խորհրդին, Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարին և Գրասենյակին:

11. Վարչության կողմից ստեղծված փաստաթղթերը ստորագրում է Տեսչական մարմնի ղեկավարը:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Վարչության կառուցվածքում ներառված չեն ներքին կառուցվածքային միավորներ: